

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բառակազմության ուսուցման մեթոդիկական տարրական
դասարաններում

Կատարող՝ Ավագյան Ալլա
Աշոցքի միջնակարգ դպրոց
Դասվար

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1 Բառակազմության ուսուցման մեթոդիկան	
1.1 Բառակազմական աշխատանքների նպատակն ու բովանդակությունը.....	4
1.2 Բառի տեսակների ուսուցումը.....	6
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ.....	20

Ներածություն

Արդիականություն: Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան ունի իր հիմնական բաժինները, որոնցում առանձին-առանձին քննարկվում են գրաձանաչության, ընթերցանության քերականության ուսուցման, խոսքի զարգացման ուղղությամբ տարվող և մեթոդական աշխատանքների կազմակերպման հարցերը: Այդ բաժանումները հիմնականում պայմանական են, քանզի տարրական դասարաններում հայոց լեզվի ուսուցման բոլոր հարցերը փոխկապակցված են, լրացնում ու ամբողջացնում են միմյանց: Տարրական գիտելիքների ուսուցումը հիմնականում իրականացվում է վերլուծական-համադրական մեթոդով: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը սկսվում է նախադասությունից, որը նախագիտելիքների օրգանական շարունակություն է դառնում: Նախադասություններից էլ հանվում ու ուսումնասիրվում են բառերը՝ որպես իմաստային կամ լեզվական միավորներ և քերականական հասկացություններ: Առանձին ուսումնասիրման փուլից հետո այդ նույն բառերն օգտագործվում են նախադասության կազմում և կապակցության մեջ դրվում այլ բառերի հետ: Այլ կերպ՝ բառերը քաղվում, հանվում են կենդանի խոսքից, ուսումնասիրվում և նորից վերադառնում են խոսքի մեջ՝ դառնալով առավել բազմակողմանի ճանաչված ու գիտակցված:

Բառակազմություն թեման դասավանդվում է ավելի ուշ: Այստեղ գաղափար է տրվում բառի լեզվական բնորոշման, կազմության՝ պարզ, բարդ և ածանցավոր բառերի, արմատի ածանցի, հոդակապի մասին: Այնուհետև երեխաները պետք է ուսումնասիրեն խոսքի մասերը, այսինքն՝ բառերի խոսքիմաստային արժեքը, որի ըմբռնումն անհամեմատ ավելի դժվար է, քան իմաստային կողմը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել բառակազմության ուսուցման մեթոդիկական տարրական դպրոցում:

Աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել բառակազմական աշխատանքների նպատակն ու բովանդակությունը,

2. Ներկայացնել բառի տեսակների ուսուցման մեթոդիկական:

Գլուխ 1 Բառակազմության ուսուցման մեթոդիկական

1. Բառակազմական աշխատանքների նպատակն ու բովանդակությունը

<<Բառակազմություն>> թեմայի ուսումնասիրությունը ոչ միայն տեսական՝ երեխաների լեզվական գիտելիքների հարստացման ու դրանց սահմանների ընդարձակման նպատակ է հետապնդում, այլև գործնական՝ բառապաշարի հարստացման, բառակազմական հնարների, ունեցած բառապաշարը լայն գործածության մեջ դնելու և այդ հիմքի վրա բազմաթիվ նոր բառեր ստանալու: Երկրորդ դասարանում բառի մասին ընդհանուր հասկացություն տալու ժամանակ անպայման պետք է հենվել առաջին դասարանում տրվածի վրա, քանի որ երեխաների ունեցածը և նոր հաղորդվելիքը միմյանց չեն հակասում: ¹

Բառակազմությունն ուսուցանում է բառի կազմությունը: Հանրակրթական դպրոցում բառակազմության ուսուցումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական շատ կարևոր նշանակություն: Բառակազմության ուսուցման ընթացքում աշակերտներին հասկացողություն է տրվում բառի կազմության յուրահատկությունների և բառաստեղծման ուղիների մասին: Բառակազմական աշխատանքների մեջ մտնում են բառերի վերջավորությունն ու հիմքը տարբերելու, բառերի վերջավորությունը հիմքից առանձնացնելու, բառերը վանկատելու, բառի հիմքը մասերի բաժանելու, նույնարմատ բառերն ու միևնույն ածանցն ունեցող բառերը խմբավորելու, ինչպես նաև բառերն ըստ կազմության վերլուծելու կարողությունների մշակումն ու ամրակայումը: Արմատի ուսուցումն սկսելիս նպատակահարմար է մեկ անգամ ևս աշակերտներին հիշեցնել, թե ինչ է բառը: Աշակերտներն արդեն գիտեն, որ բառը հնչյուն կամ հնչյունների այնպիսի միացություն է, որն իմաստ ունի, որի միջոցով պատկերացնում ենք որևէ առարկա, գործողություն, առարկայի կամ գործողության հատկանիշ և այլն: Ապա գրատախտակին գրվում է՝ սեղան, փողոց, քաղաք, լեռ, կլոր, փայտե, ուղղաձիգ, մեծ, տասը, հիսունհինգ, ղեկավարել, թագադրել, զոհել և այլն: Աշակերտների միջոցով պարզվում է, թե այս բառերից որոնք են ցույց տալիս առարկա, գործողություն, առարկայի և գործողության հատկանիշ:

¹ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, Էջ 345

Երկրորդ դասարանում բառի մասին ընդհանուր հասկացություն տալու ժամանակ անպայման պետք է հենվել առաջին դասարանում տրվածի վրա, քանի որ երեխաների ունեցածը և նոր հաղորդվելիքը միմյանց չեն հակասում:

Բառակազմություն, լեզվաբանության բաժին, որն զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների ու կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Բառակազմություն է կոչվում նաև նոր բառերի կազմության գործընթացը, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը:

Բառակազմական

օրինաչափությունների, կանոնների ու կաղապարների ամբողջությունը ներկայացնում է տվյալ լեզվի բառակազմական համակարգը: Բառակազմական համակարգի մեջ են մտնում այն տարրերը, որոնցից կազմված է բառը, նրա կառուցվածքի մեջ մտնող միավորները (արմատ, ածանց, հոդակապ), բառերի կառուցվածքը, ինչպես նաև այն օրենքները, որոնցով բառերն ըստ իրենց բառակազմական իմաստների խմբավորվում են բառակազմական տիպերի՝ բառերի որոշակի տեսակների մեջ:²

Բառակազմությունը սերտորեն կապված է բառապաշարի, ինչպես նաև քերականության՝ ձևաբանության ու շարահյուսության հետ:

Բառապաշարի հետ բառակազմության հետ ունեցած կապը պայմանավորված է նրանով, որ բառակազմության շնորհիվ լեզվի բառակազմական միջոցներով կերտվող նորանոր բառերը համալրում են լեզվի բառային կազմը: Իսկ նոր բառերի կերտումը կատարվում է բառապաշարի զարգացման պահանջով:

Բառակազմության կապը քերականության հետ անմիջական է. բառերը կազմվում են տվյալ լեզվի քերականության՝ ձևաբանական և շարահյուսական կանոններով:

1.2 Բառի տեսակների ուսուցումը

² <https://hy.wikipedia.org/>

Բառի մասին նախնական պատկերացում երեխաներն ունեն դեռես գրաճանչության շրջանից (միավանկ բառեր, բազմավանկ բառեր): Գործնական վարժությունների ճանապարհով նրանք աստիճանաբար համոզվում են, որ իրենց ծանոթ բառերից յուրաքանչյուրը որոշակի իմաստ ունի. ցույց է տալիս իր, անձ, երեույթ, հատկանիշ, գործողություն և այլն: Գիտեն նաև, որ բառը կազմված է տառերից (հնչյուններից), և դրանց խառը դասավորումից բառիմաստը կորչում է: Սակայն երբ հնչյունները միանում են որոշակի հաջորդականությամբ, դառնում են բառ և իմաստ են արտահայտում: Այս հատկանիշները ըմբռնելուց հետո կարելի է նրանց մղել բառի սահմանման ձևակերպմանը. **բառը հնչյունների (տառերի) այն միացությունն է, որն իմաստ է արտահայտում:** Երեխաները դեռևս նախադպրոցական տարիքում գործնականորեն տիրապետում են և խոսքում ճիշտ օգտագործում առարկաների որոշակի խմբերին տրվող ընդհանուր անունները (խաղալիքներ, ծաղիկներ, կենդանիներ, մրգեր, կահույք):

Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում նրանք պետք է սովորեն ոչ միայն ընդհանուր անունների տակ ընդգրկվող առարկաների անվանումները (մրգեր՝ խաղող, խնձոր, տանձ..., կահույք՝ աթոռ, սեղան, բազմոց,...), այլև բառերը խմբավորել ըստ դրանց ցույց տված առանձին հատկանիշների՝ ըստ նյութի (փայտից, երկաթից, ալյուրից ...), ըստ օգտագործման նպատակի (ուտելու են, խմելու են, հագնելու են), ըստ գույնի (կարմիր են, դեղին են...):³

Բառի հասկացության ամրապնդման վարժություններում կարելի է գործադրել ոչ միայն բառերի հնչյունային կազմի ու վանկային կառուցվածքի, այլև բառիմաստի մոտիկության, բառիմաստի հակադրության, ցույց տված ընդհանուր հասկացության հիմքով կատարվող դաստիարակման ու խմբավորումներ, որոնք կնպաստեն ոչ միայն տարբեր հիմքերով բառերի չանաչմանը, այլև բառապաշարի հարստացմանը:

Սակայն բառի մասին տրվող այս ընդհանուր հասկացությունը լրիվ չի կարող լինել, եթե նախնական ձևով գաղափար չտրվի բառի կազմության մասին՝ առանց որի հնարավոր չէ հետագա աշխատանքը **բառի կազմությունն** ուսումնասիրելու ուղղությամբ: Քար, քարե, քարաշեն, քարագործ, քարածուխ, քարայր, քարինք,

³ Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 211:

քարածայր, քարաղ բառերի համեմատության ու հակադրության միջոցով կարելի է ցույց տալ, որ բառերը կարող են կազմված լինել մեկ, երկու, երեք և ավելի մասերից, որ բառերը կազմությամբ նման կամ տարբեր կարող են լինել: Այդ նույն օրինակների վրա կարելի է ցույց տալ, որ հաճախ մի շարք բառեր կարող են կազմված լինել միևնույն բառամասից կամ իրենց կազմության մեջ կարող են ունենալ միևնույն մասը, բայց արտահայտել միանգամայն տարբեր իմաստներ՝ ինչպես որ բերված օրինակի բառերն են արտահայտում:⁴

Ուսուցման այս փուլում երեխաների գիտակցությանը պետք է հասցնել նաև բառի և նրա ցույց տված առարկայի տարբերությունները: Այդ գործընթացն առավել մատչելի իրականացնելու համար դասասեղանի վրա դրվում են զանազան առարկաներ, և աշակերտներին առաջարկվում է դրանք վերցնել, շոշափել և անվանել: Յուրաքանչյուր առարկայի անունն արտասանում է երեխաներից մեկը, իսկ մյուսը գրատախտակին գրում է այդ անունը:

Դասարանը կարողում է գրատախտակին գրվածը և գալիս այն եզրակացության, որ առարկաները (իրերը) կարելի է վերցնել, ձեռք տալ, շոշափել և այլն, իսկ դրանց անունները՝ բառերը, միայն արտասանել, գրել և կարդալ: Այնուհետև վարժությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորվում է միևնույն առարկան, երևույթը, հատկանիշը, գործողությունը տարբեր բառերով ներկայացնելու ունակություն: Երեխաները բացատրում են այդ բառերի իմաստներն ու նրբերանգային տարբերությունները, նախադասությունների մեջ ընդգծված բառերը փոխարինում հարմար այլ բառերով՝ հոմանիշներով, հոմանշային շարքի բառերն օգտագործում նախադասությունների մեջ, կապակցված խոսքում: Նույնատիպ աշխատանք է տարվում նաև հականիշների մասին գաղափար տալիս:

Առարկաների թվի մասին երեխաները դեռևս նախադպրոցական տարիքում գաղափար ունեն և խոսքում ճիշտ են օգտագործում գոյականի եզակի և հոգնակի թվերը: Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում պիտի գաղափար տրվի **-եր** և **-ներ** հոգնակիակերտ մասնիկների և դրանց գործածության առանձնահատկությունների մասին:

⁴ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 346

Բառերի քերականական իմաստն ընկալելի դարձնելու, խոսքի մասերի միջև եղած տարբերություններն ակնառու կերպով զգալ տալու նպատակով շահեկան է օրինակ բերել ոչ միայն նյութական, շոշափելի իմաստ ունեցող բառեր, այլև վերացական և այլ խոսքի մասերով ձևավորված գոյականներ:⁵

Մայրենիի դասերի ժամանակ ընթերցվող ստեղծագործությունների մեջ հանդիպած անձանոթ բառերի իմաստը բացատրելու եղանակներից մեկը բառի մասնատումն է ըստ ձևայինների և երեխաներին հայտնի արմատների հետ ունեցած իմաստային կապերի հայտնաբերումը:

Ձևայինների մասին գիտելիքների ձեռքբերումն ու այդ ուղղությամբ կարողությունների մշակումը կարևորվում են որպես բառի նշանակու թյան բացահայտման հիմնական եղանակ:

Բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքներն կարևոր են, որովհետև դրանք բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն են: Հայտնի է, որ հայերենի ուղղագրության ուսուցման առաջատար սկզբունքը սովորողների կողմից ձևաբանական հիմքի գիտակցումն է: Այդ պատճառով էլ ուսուցիչը ուղղագրական կարողությունների մշակման ուղղությամբ աշխատանքները պետք է առաջին հերթին իրականացնի՝ սկսելով բառարմատների ուղղագրության ուսուցումից:

Բառակազմական գիտելիքներն ուսուցանելիս պետք է նկատի ունենալ, որ բառի մեջ եղած բոլոր ձևայինները փոխադարձաբար կապված են, և յուրաքանչյուր ձևային իմաստ բացահայտվում է միայն տվյալ բառի մեջ: Այդ պատճառով էլ տարրական դասարաններում արմատի և ածանցի մասին նախնական գիտելիքներն ուսուցանվում են փոխկապակցության մեջ և քայլ առ քայլ:

- **Առաջին քայլ**, նախապատրաստական ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են նույնարմատ բառերի շուրջ կատարվող աստիճանաբար բարդացող վարժությունների ճանապարհով:
- **Երկրորդ քայլ**, երեխաները համեմատությունների և վերլուծությունների միջոցով որոշում են նույնարմատ բառերի և արմատի առանձնահատկությունները:

⁵ Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 212:

• **Երրորդ քայլ**, բառի մեջ արմատի դերի և նրա առանձնահատկությունների, արմատի և ածանցի՝ ուղղագրության և բառակազմության միջև գոյություն ունեցող կապի, բառերի ուղղագրության ուսումնասիրում

• **Չորրորդ քայլ**, բառի ձևային կառուցվածքի մասին երեխաների ունեցած գիտելիքների ընդլայնում, խորացում, ամրակայում, բառակազմական ունակությունների զարգացում, հոլովական վերջավորությունների ուղղագրության յուրացում, բայի ժամանակային և եղանակային վերջավորությունների իմաստների գիտակցում և ուղղագրական կարողությունների ամրակայում:⁶

Բառակազմական նախապատրաստական ուսումնասիրություններն իրականացվում են լեզվական վարժությունների կատարման ճանապարհով՝ երեխաներին նախապատրաստելու համար նույնարմատ բառերի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների, դրանց փոխկապակցության ընկալմանը: Դասալսումները ցույց են տվել, որ նույնարմատ բառերի ուսումնասիրման առաջին փուլում աշակերտները հաճախ այդպիսիք են համարում միայն այն բառերը, որոնք առարկայորեն նույնանուն են (տուն-տնակ, ձուկ-ձկնիկ, շուն-շնիկ, նավ-նավակ), և նույնարմատ չեն համարում այնպիսի բառերը, ինչպիսիք են, օրինակ՝ անտառ-անտառապահ, ձյուն- ձնեմարդ և այլն: Նրանք մասնավորապես դժվարանում են նույնարմատություն տեսնել ածանցավոր բառերի մեջ: Այս դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է վարժություններ կատարել բառակազմական տարբեր օրինաչափությունների շուրջ լեզվական իրողությունները ներկայացնելով պարզից դեպի բարդը գնացող սկզբունքով: Որպեսզի երեխաներն ըմբռնեն նույնարմատ բառերի միջև գոյություն ունեցող իմաստային տարբերություններն ու ընդհանրությունները, շահեկան է դրանք դիտարկել իբրև առանձին բառեր՝ առաջարկել երեխաներին դրանք օգտագործել նախադասության մեջ և կապակցված բնագրում

Նպատակահարմար է նախ գաղափար տալ նույնարմատ բառերի մասին, որպես մի ընդհանուր կրկնվող մաս ունեցող բառեր և ապա նոր արմատի մասին, որպես բառի կազմության մեջ մտնող տարբեր մասերի մեջ ամենահիմնականը՝ թե ըստ իմաստի և թե ըստ կազմության: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ

⁶ Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 214:

նույնարմատ կամ ընդհանուր մաս ունեցող բառերի մասին առաջին դասարանում երեխաները որոշ տեղեկություններ արդեն ստացել են և դա անպայման պետք է օգտագործել:⁷

Նույնարմատ բառերի ճիշտ որոշման և դրանց իմաստային նրբերանգների ընկալման կարողության ձևավորման նպատակով արդյունավետ է նկարներով կամ համապատասխան առարկաներով աշխատանքը: Օրինակ՝ կարելի է ցուցադրել մեծ տան և փոքր տան, մեծ ձկան և փոքր ձկան, ծաղկի և ծաղկամանի, ձյան և ձնեմարդի և նման այլ նկարներ ու առաջարկել սեղանին դասավորած բառերն ընտրել և փակցնել բառիմաստին հարմար նկարի տակ: Այսպիսի վարժությունից հետո աշակերտների համար ակնհայտ կդառնա ոչ միայն որոշ բառերի՝ նույն ծագումն ունենալու հանգամանքը, այլև դրանց իմաստային տարբերությունները: Այս հասկացությունը երեխաների մեջ ամրակայելու համար ուսուցչի օգնությամբ և անմիջական մասնակցությամբ երեխաները գրատախտակին գրում են նույնարմատ բառերի խումբ՝

- օդ, օդապարիկ, օդանցք, օդաչու, օդանավ, օդափոխել,
- փայտ, փայտաշեն, փայտանոց, փայտահատ, փայտառատ,
- սար, սարլալանջ, սարահարթ, Գանձասար, Օձասար:

Այս բառաշարքերի բառերի համեմատության ճանապարհով երեխաները եզրակացնում են, որ յուրաքանչյուր շարքում կա կրկնվող ընդհանուր բառ՝ օդ, փայտ, սար: Երեխաներն ուսուցչի օգնությամբ հայտնաբերում են, որ բառի կրկնվող մասի՝ արմատի մեջ թաքնված է բառի հիմնական իմաստը, այսինքն՝ այն բառի իմաստակիր մասն է: Այստեղից եզրակացություն.

1.Բառի այն մասը, որն անփոփոխ կերպով կրկնվում է մի շարք բառերի մեջև արտահայտում է բառի հիմնական իմաստը, կոչվում է արմատ:

2.Միննույն արմատից կազմված բառերը կոչվում են նույնարմատ բառեր:⁸

Ամրապնդման համար մարզողական, վերլուծական ու կիրառական բնույթի բազմաթիվ բանավոր և գրավոր վարժություններ կարելի է կատարել՝ հատկապես

⁷ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 347:

⁸ Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 216:

նույնարմատ բառերը խմբավորելու, տրված բառերի մեջ ընդհանուր մասը կամ արմատը գտնելու և ընդգծելու, տրված բառով նոր բառեր կազմելու և այլ առաջադրանքներով: Պետք է նկատել, որ նույնարմատ բառերի բառախմբերի մեջ բառարմատը, որպես կրկնվող ընդհանուր բառամաս, ճանաչելն ու տարբերակելը շատ ավելի հեշտ է, քան մեկ առանձին բառի մեջ, իսկ անհրաժեշտ է, որ երեխաները հենց առանձին վերցրած բառի մեջ կարողանան ճանաչել ու առանձնացնել բառարմատը կամ արմատը, որպես բառի հիմնական իմաստն արտահայտող մասի:

Գրատախտակին գրում ենք հետևյալ բառերը՝ դպրոցական, դառնություն, երկաթեղեն, ընկերուհի, արծաթյա և այլն: Աշակերտները ցույց կտան, որ դպրոցական բառի մեջ դպրոց և ական մասերից հիմնականը կամ արմատը դպրոցն է, դառնություն բառի մեջ՝ դառն, երկաթեղեն բառի մեջ՝ երկաթը և այլն: Աշակերտները եզրակացնում են՝ բառի հիմնական իմաստն արտահայտող մասը կոչվում է արմատ: Տարբեր բառերի մեջ արմատները գտնելու, նույնարմատ բառերը խմբավորելու, տված արմատներով բառեր կազմելու և համանման այլ վարժությունների միջոցով պետք է ամրապնդեն արմատի մասին տրված հասկացությունը, բառի մեջ նրա ճանաչումն ու տարբերակումը վերածել գործնական կարողության:⁹

Բառերի տեսակների ուսուցումը ըստ կազմության

Բառակազմության տեսանկյունով զանազանում են պարզ բառեր և բաղադրյալ բառեր. բաղադրյալներն իրենց հերթին լինում են՝ *բարդ, բարդ ածանցավոր, հասպավական*. կան և քարացած բառաձևեր: Վերջիններս եթե բնորոշ են բաղադրիչների առավել սերտաճումով, կարող են դիտվել իբրև պարզ բառեր: Հին քերականները զանազանում էին *պարզ, ածանցական, բարդ, հարաբարդ* բառեր: Սրանց ըմբռնման շրջանակները մասամբ չեն համապատասխանում այժմյան սահմանումներին, այսպես՝ ածանցական կամ ածանց բառ ասելով մեծ մասամբ հասկանում էին վերջաձանցավորները, հարաբարդությունն ընդգրկում էր մի քանի անգամ բարդվածները, բազմարմատ բարդությունները: Ածանցավորների մեջ

⁹ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 347:

բաղադրող (սերող) հիմքը կոչվում էր նախագաղափար, իսկ բառակազմության հարցերը քննվում էին **ձև(ք)** կարգի տակ: Սակայն տարրական դասարանում ուսումնասիրվում է բառակազմություն թեման հետևյալ կերպ. Ըստ կազմությանը՝ բառերը լինում են երեք տեսակ՝ **պարզ, բարդ, և ածանցավոր:**

Ածանցի տարբերակման ու ճանաչման համար անհրաժեշտ է արդեն քննարկած ու ծանոթ բառերի մեջ ուշադրության առնել արմատի անջատումից հետո մնացած բառի մյուս մասերը և ցույց տալ, որ բացի արմատից բառն ունի նաև այլ մասեր, որոնք նույնպես պետք է ճանաչել, քանի որ դրանք ևս բառիմաստի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն: Սա կլինի նախապատրաստական վարժության առաջին փուլը՝ լեզվական երևույթի առանձնացումը և ուշադրության առնելը:

Ածանցների բառակազմական դերն ուսումնասիրվում է իմաստային տեսանկյունով՝ դիտարկելով դրանց էական հատկանիշները՝

- բառակազմական գործածությունը,
- բառի մեջ ունեցած դիրքը:

Բառից արմատի առանձնացումից հետո մնացած մասերի դիտարկումը և համադրումը երեխաներին բերում են այն եզրակացության, որ դրանք, ավելանալով բառի վրա, փոխում են բառի իմաստը, նոր իմաստ են տալիս արմատին:

Երեխաներն ուսուցչի հանձնարարությամբ ալիքաձև ընդգծում են այն մասնիկները, որոնք ավելացել են բառի սկզբից կամ վերջից և փոխել նրա իմաստը ու եզրակացնում են.

Այն մասնիկը, որն ավելանալով բառի սկզբից կամ վերջից, փոխում է նրա ձևը, նրան նոր իմաստ է տալիս, կոչվում է ածանց:

Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր:

Այնուհետև երեխաներն ուսուցչի առաջարկած արմատներով և ածանցներով բառեր են կազմում և գրում գրատախտակին:

Անտուն, չտես, փոքրիկ, տնակ, գունավոր, աշակերտուհի և նման այլ բառերի զննումից աշակերտները հայտնաբերում են, որ ածանցներն ավելացել են ինչպես բառերի սկզբից, այնպես էլ վերջից, և եզրակացնում են.

1. Կան ածանցներ, որոնք ավելանում են բառի սկզբում: Դրանք նախաածանցներն են:

2. Կան ածանցներ, որոնք ավելանում են բառի վերջում: Դրանք վերջածանցներն են:

Այնուհետև մարզողական, ամրակայող և տարաբնույթ այլ վարժությունների միջոցով գործնական աշխատանք է տարվում բառի մեջ արմատների և ածանցների որոշման, տրված արմատներով և ածանցներով նոր բառեր կազմելու կարողությունների ձևավորման և ամրակայման ուղղությամբ: Այս գործընթացը նպաստում է ոչ միայն հետագայում ձևաբանական գիտելիքների ձեռքբերմանը, այլև աշակերտների լեզվամտածողության զարգացմանը, վերլուծելու-համադրելու կարողությունների ձևավորմանը:

Պարզ և բարդ բառերի ուսումնասիրման գործընթացը հենվում է բառից արմատի առանձնացման ուղղությամբ աշակերտների ունեցած կարողության վրա: Այս խնդրի լուծման համար աշակերտներն ուսուցչի հանձնարարությամբ գրատախտակին գրում են միայն արմատներից կազմված և ածանցավոր բառեր: Առաջադրվում է առանձնացնել ածանցավոր բառերը և գրել մի սյունակում, իսկ միայն արմատից կազմված բառերը՝ մեկ այլ սյունակում: Երեխաների ուշադրությունը հրավիրվում է միայն արմատ ունեցող բառերի սյունակի վրա և հանձնարարվում գտնել այդ բառերի մեջ այն մասնիկները, որոնց «անջատումից» բառիմաստը չի փոխվում: Բնականաբար, աշակերտները չեն կարողանում գտնել այդպիսիք և եզրակացնում են.

• *Միայն մեկ արմատից կազմված բառերը կոչվում են պարզ բառեր:*

Որպես մարզողական, վերլուծական ու կիրառական վարժություններ կարելի է հանձնարարել տրված բառերը տեսակավորել ըստ պարզ և ածանցավոր տեսակների, կապակցված նյութից գտնել ու առանձնացնել շարքերով դուրս գրել պարզ և ածանցավոր բառերը, տրված պարզ բառերի դիմաց գրել դրանց ածանցավոր ձևերը, տրված ածանցավոր բառերը վերլուծել առանձին բաղադրիչների և ըստ առանձին սյունակների գրել նախածանցը, արմատը և վերջածանցը, գրել պարզ և ածանցավոր բառեր, այդ բառերով նախադասություններ կազմել և այլն:¹⁰

¹⁰ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 350

Հենվելով պարզ բառերի մասին երեխաների ունեցած տարրական պատկերացումների վրա՝ համադրման ճանապարհով գաղափար է ձևավորվում բարդ բառերի մասին: Այդ նպատակով գրատախտակին գրվում է երկու բառաշարք, որոնց բառերի միացումից կարող են ստացվել նորերը.

երես + սրբիչ =երեսսրբիչ

խաղ + ընկեր =խաղընկեր

թանաք + աման =թանաքաման

Երեխաները նախ ասում են ստացված բառերը, ապա գրում են: Այնուհետև նրանց առաջարկվում է ասել այնպիսի բառեր, որոնք ունեն երկու արմատ: Բնականաբար, աշակերտների ասած բառերի մեջ լինում են նաև այնպիսիք, որոնք իրար միացած են լինում ու հոդակապով: Դրանք իսկույն գրվում են գրատախտակին, ընդգծվում են արմատները, ուսուցիչն ու հոդակապը վերցնում է շրջանակի մեջ և երեխաներին բերում այն եզրակացության, որ ու տառը կապում է բառերի արմատները, դրա համար էլ այն կոչվում է հոդակապ: Ածանցավոր մի քանի բառի օրինակով (հեռախոսավարուհի, ծովափնյա, անկարգապահ) երեխաները գալիս են եզրակացության, որ բառերը կարող են միաժամանակ ունենալ մեկից ավելի և՛ արմատներ, և՛ ածանց կամ ածանցներ, և՛ հոդակապ, ապա եզրակացնում են.

- *Մեկից ավելի արմատներից կազմված բառերը կոչվում են բարդ բառեր:*
- *Բարդ բառերը ես կարող են լինել ածանցավոր (բարդ ածանցավոր):*

Բարդ բառի մասին տրված հասկացությունն ամրապնդելու համար բազմաթիվ վարժություններ պետք է կատարել, որոնց մեջ աշակերտների ինքնուրույն աշխատանքի բաժինը համեմատաբար ավելի մեծ է լինելու:

Ինչպես բարդ բառի մասին տրված տարրական գիտելիքներն ընդլայնելու և ամրակայելու, այնպես էլ պարզ բառերից ու արմատներից նոր բառեր կազմելու ուղղությամբ երեխաների մեջ մշակվող գործնական կարողությունը լիարժեք դարձնելու համար անպայման գաղափար պետք է տալ նաև բարդ բառերի կազմության եղանակների ու ձևերի մասին:

Բարդ

բառերն ըստ կազմության լինում են երեք տեսակ՝ իսկական, անիսկական և նորագույն հապավումներ:

Մինչև այս հարցին անդրադառնալը նախորդ բոլոր վարժությունների համար սովորաբար պետք է վերցնել անհողակապ բարդ բառեր կամ այնպիսի պարզ բառեր ու արմատներ, որոնց միացման ժամանակ հողակապ չի օգտագործվում, որպեսզի թե բառերը բաղադրիչների վերլուծելիս և թե առաջադրված արմատներից բարդ բառեր կազմելիս երեխաները հողակապի չհանդիպեն: Իսկ եթե երեխաններ բերած օրինակներում հանդիպում են նման բառեր, ապա նպատակահարմար է շրջանցել դրանք կամ վերլուծության ժամանակ հողակապի վրա հատուկ ուշադրություն դարձնել: Բարդ բառերի կազմության ձևերի մասին գաղափար տալու համար պետք է վերցնել երկու շարք բառեր, մի շարքում՝ *անհողակապ բարդ բառեր*, որոնք ստացվել են պարզ բառերի կամ արմատների կցման միջոցով, իսկ երկրորդ շարքում՝ *հողակապավոր բարդ բառեր*, որոնք կազմված են երկու կամ ավելի արմատներից ու հողակապերից, այդ բառերի վերլուծության շնորհիվ պարզվում է, որ բարդ բառը կարող է բաղկացած լինել երկու մասից և երեք մասից:

Վերլուծությունը հնարավորություն է տալիս երեխաներին բերելու այն եզրակացության, որ առաջին շարքի բարդ բառերը կազմված են երկուական արմատներից, իսկ երկրորդ շարքի բառերը՝ երեքական մասից՝ երկու արմատներից և ա-ից: Առաջին դեպքում պարզ բառերն իրար հետ միացել են անմիջապես, իսկ երկրորդ դեպքում՝ ա ձայնավորի միջոցով, որը կոչվում է հողակապ: Երեխաներին արդեն դժվար չի լինի զրակացնել՝

- *Բարդ բառի երկու մասերը իրար հետ միացնող ա ձայնավորը կոչվում է հողակապ:*

Այս հասկացությունը տալուց հետո բառակազմական աշխատանքն ավելի բազմակողմանի ու բովանդակալից կդառնա, որովհետև բարդություններ կազմելու եղանակը ևս երեխաները գիտեն և այդ աշխատանքը գիտակցորեն ու քերականական նորմաներով կկատարեն:

Բարդ և ածանցավոր բառերն անցնելիս հատուկ աշխատանք է տարվում նաև ուղղագրության ուսուցման ուղղությամբ:

Տրված հասկացությունն ամրապնդելու համար կատարում ենք վարժություններ.

Արև- արևածագ, արևամուտ, արևաշող

Ատամ- ատամհատիկ, ատամնաբուժարան, ատամնաքար

Ծաղիկ- ծաղկաման, ծաղկեփունջ, ծաղկաձոր

Զգեստ- զգեստապահարան, շրջագգեստ, լողագգեստ

Սեղան- գրասեղան, աշխատասեղան, ճաշասեղան

Պահարան- գրապահարան, զգեստապահարան, հանդերձապահարան

Անիսկական բարդ բառերի ուսուցումը- Իսկական բարդ բառերի ուսուցումից հետո

նույն ձևով անցնում ենք անիսկական բարդությունները: Անիսկական բարդություններ

կոչվում են այն բարդ բառերը, որոնք կազմվում են երկու և ավելի բառերի

հարադրումից կամ կցումից: Համապատասխան օրինակներով բացատրում ենք

հարադիր բարդ բառերի կազման եղանակները՝ ա) հարադիրներ կան, որոնք թեպետ

մի բառի նշանակություն ունեն, բայց բաղադրիչ մասերը ոչ մի բառով չեն շաղկապվում,

այլ գրվում են անջատ: Օրինակ՝ ման գալ, թափ տալ, սիրտ անել, շուռ տալ և այլն:

բ) հարադիրների մյուս տեսակն այն է, որ բաղադրիչ մասերն անջատ գրելով հանդերձ,

միմյանց հետ միանում են **և, ու** շաղկապներով և կապով: Օրինակ՝ ցիր **ու** ցան, ահ **ու**

դող, առ **և** տուր, մի **առ** մի, տուն **առ** տուն և այլն:

գ) հարադրությունների հաջորդ տեսակը նույն բաղադրիչ մասի կրկնությամբ է

կազմվում և միանում են գծիկով: Օրինակ՝ շուտ-շուտ, արագ-արագ, կամաց-կամաց,

փունջ- փունջ, խումբ-խումբ և այլն:

Հարադիր բարդությունները բացատրելուց հետո նույն ձևով բացատրում ենք կցական

բարդությունները: Կցական բարդությունները կազմվում են հարադիրներից,

հոդակապ չունեն և բաղադրիչ մասերը մեկը մյուսին լրացում չեն դառնում, միմյանց

միանում են կամ ուղղակիորեն կամ **և, ու** շաղկապներով, կամ **զ, ի, առ, ընդ, ըստ**

կապերով(նախդիրներով): Օրինակ՝ ժամառժամ, մերթընդմերթ, սարնիվեր, առևտուր:

Այս բոլոր բացատրություններից հետո անցնում ենք նյութի ամրապնդմանը: Օրինակ՝

գրատախտակին գրված բարդ բառերը խմբավորել ըստ կրկնավոր, հարադրավոր և

կցական բարդությունների:

կրկնավոր	հարադրավոր	կցական
փունջ- փունջ	մեկ առ մեկ	առևտուր
մեծ-մեծ	գիշեր-ցերեկ	այրուձի
կամաց-կամաց	գլուխ տալ	կեսգիշեր
քիչ-քիչ	պար գալ	քսանհինգ

Դիտում ենք շարքերը և վերհիշում, թե բաղադրիչներից յուրաքանչյուրը ինչպես են միացել: Առաջին շարքում բառերը միացել են միացման գծիկով, բառերի կրկնությամբ: Երկրորդ շարքում բառերը միացել են կա՛մ շաղկապով ու կապով, կա՛մ գծիկով, կա՛մ էլ գրվում են առանձին-առանձին: Իսկ երրորդ շարքում բաղադրիչներն իրար կպած են, այսինքն՝ եզրակացնում ենք, որ բառերը հարադիրների և կրկնավորների կցումով են կազմված:

Բարդ բառերը ըստ խոսքի մասերի կարող են կազմվել.

ա) գոյականը գոյականի հետ, օրինակ՝ հացատուն, թանաքաման, ջրհոր

բ) գոյականն ածականի հետ, օրինակ՝ լուսապայծառ, ոտաբոբիկ

գ) ածականը գոյականի հետ, օրինակ՝ սևաթույր, քաղցրահամ, շիկահեր

դ) գոյականը բայարմատի հետ, օրինակ՝ ձկնորս, մեղվաբույծ, հայրենասեր

ե) բայարմատը գոյականի հետ, օրինակ՝ լսափող, շնչափող, խաղաղաշտ

զ) ածականը բայարմատի հետ, օրինակ՝ լռակյաց, քչակեր, լավատես, բարձրախոս

է) ածականը ածականի հետ, օրինակ՝ կանաչ- կարմիր, մութ-մութ, քիչ-քիչ

ը) դերանունը գոյականի հետ, օրինակ՝ այստեղ, այսօր

թ) թվականը թվականի հետ, օրինակ՝ հինգ-վեց, երեք-չորս, տասնմեկ, հիսուվեց

Բառերն ըստ իմաստի և ձևի լինում են չորս տեսակ.

ա) իմաստով նույն նշանակությունն ունեցող բառերը կոչվում են **նույնանիշ բառեր**: Օր.՝ այտ-թուշ, ուրախ- երջանիկ

բ) իմաստով իրար մոտ բառերը կոչվում են **հոմանիշ բառեր**, օր.՝ գեղեցիկ-սրուն-գողտրիկ, հզոր-գորեղ-ուժեղ և այլն:

գ) իմաստով միմյանց հակադիր բառերը կոչվում են **հականիշ բառեր**, օր.՝ քաջ-վախկոտ, սև-սպիտակ, երկար-կարճ, մեծ-փոքր:

դ) ձևով նույն, բայց իմաստով տարբեր բառերը կոչվում են **նույնանուն կամ համանուն բառեր**, օր.՝ փող նշանակում է ն՛ դրամ, և՛ խողովակ:

Բառակազմական այս գիտելիքներն իմանալով, բարդություններ կազմելու եղանակը ևս գիտենալով՝ երեխաների աշխատանքն այդ ուղղությամբ ավելի բազմակողմանի ու բովանդակալից կդառնա, քանի որ այդ աշխատանքը գիտակցորեն ու քերականական օրինաչափությամբ կկատարեն:

Եզրակացություն

Բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքներն կարևոր են, որովհետև դրանք բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն են:

Բառակազմության ուսուցումը կարևոր նախադրյալներ է ստեղծում նաև աշակերտների ուղղագրական կարողությունների զարգացման համար: Բառակազմությունից աշակերտների ձեռք բերած գիտելիքները միաժամանակ

նպաստում են շրջապատող իրականության մասին նրանց ունեցած տեղեկությունների հարստացմանը, առարկաների, գործընթացների, երևույթների կապերի մասին աշակերտների պատկերացումների խորացմանը: Կարևոր է ոչ միայն ձգտել, որ աշակերտները հասկանան բառիմաստը, այլև զարգացնել խոսքում բառը հասկանալով օգտագործելու նրանց ձեռք բերած ունակությունը: Բառակազմության ուղղությամբ գործնական ունակությունների ձևավորումը նպաստում է նաև ուղղագրական կարողությունների մշակմանն ու դրանց հմտությունների վերածմանը:

Հայտնի է, որ հայերենի ուղղագրության ուսուցման առաջատար սկզբունքը սովորողների կողմից ձևութաբանական հիմքի գիտակցումն է: Այդ պատճառով էլ ուսուցիչը ուղղագրական կարողությունների մշակման ուղղությամբ աշխատանքները պետք է առաջին հերթին իրականացնի՝ սկսելով բառարմատների ուղղագրության ուսուցումից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980,
2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009,
3. Շահբազյան Տ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1958:
4. Ղամբարյան Կ., Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը կրտսեր դպրոցում, <<Նախաշավիղ>> Գիտամեթոդական հանդես, №6, 2012Ճ, էջ 22-27:
5. <https://hy.wikipedia.org/>

